ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՎԵՍՏ 7

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հարություն Հակոբյան

2021

ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ

Նորաձևությունն անցնում է, իսկ ոճը՝ մնում հավետ
Կոկո Շանել

Նորաձևությունը կամ՝ մոդան կամ՝ fashion-ը, մարդկությանը մշտապես հետաքրքրող ամենաարդի թեմաներից է:

Moda բառն առաջացել է լատիներեն modus արմատից, որը նշանակում է չափ, ձև, կերպ, կանոն: Մոդան ինքնին որոշակի ճաշակի, փոփոխական թելադրանքն է:

«Մոդայիկ լինել» արտահայտությունը (a la mode) մեզ է հասել դեռևս 17-րդ դարից, երբ ֆրանսիական արքունիքի մոդան օրինակ դարձավ եվրոպական շատ երկրների համար:

Մարդկանց մի մասը հետևում է նորաձևությանը, ծանոթ է վերջին «թրենդներին», գիտի բոլոր դիզայներների աշխատանքները, ու դարձել է նորաձևության գերին: Մյուս մասն էլ սկզբունքորեն դեմ է նորաձևությանը, և նախընտրում է սեփական ճաշակն ու կանոնները:

Նորաձևությունը սեռ ու տարիք չի ճանաչում, նրանով հետաքրքրվում են բոլորը: Եթե տարիներ առաջ մեր երկրում նորաձևությամբ հետաքրքրվում էին միայն կանայք, իսկ երիտասարդ տղաները բացի սև վերնաշապիկից ոչինչ չէին ընդունում, ապա այսօր ուրախությամբ կարող ենք արձանագրել, որ պատկերն այլ է: Հայաստանում վերջին մի քանի տարիներին տղաները սկսել են հետևել նորաձևությանը ու հաճախ ավելի գրագետ ոճային համադրումներով են ներկայանում, քան շատ «գլամուր» աղջիկներ:

Այսօր կարելի է հանդիպել հայ համարձակ ու օրիգինալ երիտասարդների, ովքեր գունային ամենատարբեր լուծումներով են հանդես գալիս, ու հեռու են այն կարծրատիպից, որ հայ տղան բացի սև ու գորշ գույներից չպետք է կրի այլ հագուստ:

Ե՞րբ է ծնվել մոդան: Այն ծնվել է մարդկության հետ միասին:

Հայտնի չէ, թե երբ են մարդիկ սկսել հագուստ կրել, բայց մարդաբանները կարծում են, որ կենդանիների կաշիները և բուսականությունը օգտագործվում էին որպես պաշտպանություն ցրտից, շոգից և անձրևից, մանավանդ, երբ մարդիկ գաղթում էին նոր կլիմայով վայրեր: Հագուստը և տեքստիլը կարևոր նշանակություն են ունեցել մարդկության պատմության մեջ: Դրանք ցույց են տալիս, թե ինչ նյութեր են եղել տարբեր քաղաքակրթություններում, տարբեր ժամանակներում և ինչ տեխնոլոգիաներ են օգտագործվել դրանց ստեղծման համար: Պատրաստի արտադրանքի սոցիալական արժեքն արտացոլել է նրանց մշակույթը:

Հին Հունաստան

Ճապոնիա

14-15-րդ դար

Հին ժամանակներում «շրջազգեստ» ասելով հասկանում էին ինչպես տղամարդու, այնպես էլ կնոջ զգեստապահարանի ցանկացած իր: Տարիների ընթացքում փոփոխության ենթարկվեցին շրջազգեստ հասկացությունը, ինչպես նաև շրջազգեստի համար կիրառվող նյութերն ու ձևերը:

Հին Եգիպտոսում ամենաշատ տարածված զգեստը քիտոնն էր: Հին հույների և հռոմեացիների համար հագուստի հիմնական դետալը տոգան էր, իսկ հույների համար՝ տունիկան:

Մինչև 16-րդ դար՝ շրջազգեստ կրում էին և՛ կանայք, և՛ տղամարդիկ:

Միջին դարերի ընթացքում շրջազգեստներն ավելի ճոխ տեսք ստացան՝ խաչակիրների կողմից բերված արևելյան կտորների և զարդերի շնորհիվ: Բացի այդ, շրջազգեստները ենթարկվեցին նաև ոճային փոփոխության. ի հայտ եկան ժանյակները: Այս ժամանակաշրջանի զգեստները քողարկում էին մարմնի թերությունները:

Բարոկկոյի դարաշրջանում (16-րդ դարի վերջից 17-րդ դար) նորաձևություն մտան ոճայնությունն ու թատերայնությունը: Բարոկկոն ծաղկում ապրեց ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 14-րդի օրոք, և հենց այդ ժամանակաշրջանից էլ Ֆրանսիան սկսեց թելադրել նորաձևություն ողջ Եվրոպայի համար:

18-19-րդ դարերում կրկին նորաձևություն մուտք գործեց բնականությունը: Զգեստը ձեռք է բերում հստակ չափեր և սահուն գծեր:

Հին Հռոմ

Հին Հայաստան

18-19-րդ դար

ՀԱՐՑԵՐ

ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1"Ծանոթանալով նորաձևության պատմությանը, ի՞նչ օրինաչափություններ եք տեսնում:

2"Օգտվելով տարբեր աղբյուրներից, ներկայացրե՛ք միջնադարյան Հայաստանում տարածված հագուստի առանձնահատկությունները:

3" Օգտվելով տարբեր աղբյուրներից, ներկայացրե՛ք XIX դարի Հայաստանում տարածված հագուստի առանձնահատկությունները:

3" Օգտվե՛ք հղումներից"

https://yerevanstyle.com/13281/

https://www.dasaran.net/apps/wiki/view/id/6023

https://armeniadiscovery.com/hy/articles/armenian-national-clothes-taraz

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Օգտվելով նմուշներից ձևավորե՛ք որևէ ժամանակաշրջանի հագուստ



ՔՈ ՈՃԸ

Կերտել ուրույն ոճ, թե՞ ենթարկվել նորաձևության օրեցօր փոփոխվող պահանջներին. հարց է, որը տանջում է շատերին: Նորաձև լինելու գաղափարն ինքնին արդեն գրավիչ է, բայց շատ հաճախ «նորաձևության հետևից ընկնելը» բերում է ծայրահեղությունների. մարդիկ գնում են հագուստ, որը կարող է թանկ արժենալ, բայց իրենց չսազել: Նման դեպքերում հարկավոր է հիշել մեկ պարզ ճշմարտություն՝ նորաձևությունը ստեղծվում է մարդկանց կողմից ու մարդկանց համար, ուստի պետք չէ տանջվել՝ ծախսելով մեծ գումարներ, ու փոխարենը ձեռք բերել նորաձև, բայց ոչ համապատասխան հագուստ, այլ պետք է հասկանալ, որ նորաձև բազմազան գույների ու նորույթների մեջ ձեզ համար էլ կգտնվի որևէ հարազատ լուծում:

Ճիշտ ընտրված ոճը կարող է դառնալ մարդու հաջողության գրավականը կյանքի բոլոր բնագավառներում: Առաջին հայացքից ներկայանում է հենց ձեր տեսքը՝ պատմելով ձեր բնավորության, ճաշակի ու խառնվածքի մասին: Եթե դուք լավ տեսք ունեք, ապա ավելի հեշտ կլինի մարդկանց հետ շփվել, և հասնել հաջողության:

Ոչ թե հագուստն է զարդարում մարդուն, այլ մարդն է զարդարում հագուստը: Եւ ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ, չմոռանալով սեփական «ես»-ը:



ՀԱՐՑԵՐ

ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դիտե՛ք պատկերները, ընտրե՛ք ձեզ հարմար հագուստ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

2. Տարբեր նյութեր կիրառելով ստեղծեք կոլաժներ, ներկայացնելով ձեր ամենօրյա հագուստով:
3. Տարբեր նյութեր կիրառելով ստեղծեք կոլաժներ, ներկայացնելով ձեր տոնական հագուստով:

Ի՞ՆՉ Է ԱՐՎԵՍՏԸ

Արվեստը ստեղծվում է մարդկաց միջոցով: Մարդիկ, որոնց մենք կոչում ենք նկարիչներ, քանդակագործներ, ճարտարապետներ ստեղծում են գեղանկարը, ճարտարապետական կոթողը և քանդակը: Մենք դրանք անվանում ենք «արվեստի ստեղծագործություն»:

Մեծ արվեստագետները ոգեշնչվում են այն ամենով, ինչ տեսնում են շրջապատող իրականության մեջ: Սակայն նրանք չեն ընդօրինակում այն, այլ վերստեղծում են նոր իրականություն:

Շատ հազվադեպ է լինում, որ երկու տարբեր նկարիչ միևնույն կերպ տեսնեն նույն առարկան: Այդ դեպքում, ինչպե՞ս կարելի է հաստատել, որ մի նկարն ավելի ճիշտ է արտացոլում իրականությունը, քան՝ մյուսը: Ամեն ինչ կախված է այն հանգամանքից, թե ի՞նչ է ցանկացել արտահայտել նկարիչը:

Զգացմունքը վերարտադրելուց ավելի բարդ խնդիր երևի գոյություն չունի: Եթե, օրինակ, ցանկանում ենք արտահայտել մարդու «բարդ հոգեկան աշխարհը», ինչու չպատկերենք «խառնված դեմք», ասենք՝ աչքերը քթի տակ, իսկ բերանն ականջների մոտ:

Արվեստը երբեք չի ամփոփում ամբողջ իրականությունը: Այն արտահայտում է այդ իրականության այս կամ այն կողմը: Նկարիչները միշտ տեսնում են ավելին: Արդյունքում ստեղծվում է արվեստի ստեղծագործություն, որն անկրկնելի է: Եվ եթե նկարիչը կարողացել է արտահայտել իր ասելիքը, ուրեմն աշխատանքն ստացված է:

Մարդկության պատմության ընթացքում չի եղել, և չէր կարող լինել, այնպիսի ժամանակաշրջան, որը զերծ լիներ արվեստից:

Նույնիսկ նախնադարում մարդը ձևավորում էր իր կացարանը, զարդարում իրեն և իր շրջապատի առարկաները՝ վերարտադրելով իր պատկերացումները շրջապատող իրականության վերաբերյալ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որքա՞ն հաճախ ենք մենք շփվում կերպարվեստի հետ: Ի՞նչ տեղ է այն գրավում մեր կյանքում:
2. Ի՞նչ է նշանակում արվեստի ստեղծագործություն:
3. Հարկավո՞ր է արդյոք կարողանալ նկարել, հասկանալ կերպարվեստը:

ԴԻՏԵՆՔ ԵՎ ՔՆՆԱՐԿԵՆՔ

1. Ծանո՞թ են այս ստեղծագործությունները: Հեղինակներից ո՞ւմ գիտես:
2. Ներկայացվածներից ո՞ր աշխատանքները կարելի է անվանել արվեստի ստեղծագործություն:







ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արդյոք արվեստը կարող է օգնել մեզ գիտակցելու իրականությունը:

Հասարակական, քաղաքական ու մշակութային բարդ իրավիճակներում արվեստագետները վերածվում են ակտիվիստների ու փորձում արվեստի միջոցով ազդել ճգնաժամային իրողությունների վրա: Պատմության ընթացքում արվեստը բազմիցս կարևոր դերակատարում է ունեցել շարժումներում, որոնք վճռել են պատմական ամբողջական դարաշրջանների ճակատագրեր: Հատելով գեղագիտական հաճույքի օբյեկտ լինելու անվանական կարգավիճակը՝ արվեստի քաղաքականապես մոտիվացված գործերը ուշադրություն են հրավիրում խնդիրների վրա ու մտորելու առիթ ստեղծում:



CRIME
THEFT
MURDER
RACKET
TERRORISM
KIDNAPPING
POLLUTION
ATTACK
DRUG
SEXUAL CRIMES
ARMED ROBBERY
PIRACY
STALKING
GANG
DRUG TRAFFICKING
FRAUDULENT FIRE

HELP
FRANCE
FERGUSON
UKRAINE
BRUTALITY
MISSOURI
DEATH
VIOLENCE
TERROR



ALL ART IS
POLITICAL
(EVEN WHEN IT ISN'T)

" Be Yourself;
Everyone else
is already taken."
Oscar Wilde

ՀԱՐՑԵՐ

ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դիտե՛ք պատկերները, խմբավորե՛ք՝ ըստ թեմաների:
2.Վերնագրե՛ք աշխատանքները:
3. Փորձե՛ք թարգմանել օտար լեզուներով գրված տեքստերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Տարբեր նյութեր կիրառելով ստեղծեք կոլաժներ, ներկայացնելով որևէ հիմնախնդիր:

ԱՐՎԵՍՏԸ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿ

Մեզ հասած արվեստի ամենահին ստեղծագործությունները թվագրվում են Ք.ա. 60-րդ հազարամյակով:

Նախնադարի մարդն օժտված էր ոչ միայն տեսած աշխարհը պատկերելու կարողությամբ, այլև ուներ գեղագիտական խորը զգացողություն՝ բովանդակության մեջ գեղեցիկը տեսնելու և տեսածի մեջ բովանդակություն գտնելու կարողություն:

Նկարելու կարողությունն, ինչպես և պահանջը սկսում է բնական իրերի և ձևերի նմանությունը կենդանի ձևերի հետ տեսնելու, գիտակցելու կարողությունից:

Ամեն ինչ սկսվել է գծի, գույնի և պատահական գծի գիտակցումից, որն, ասենք, գծվել է բնազդաբար Կամ ներկոտված ձեռքը պատին մաքրելու միտումով: Կամ քարայրային արջի ճանկահետքերի վրայով բնազդաբար, թե գիտակցաբար անցնելով: Մանավանդ երբ գիծը պատահաբար նմանվել է իրական առարկային: Այդ պահից գիծը վերածվել է պատկերի:



Սակայն միայն նկարչությամբ դժվար կլիներ ընկալել պատկերվող մարմնի եռաչափությունը երկչափ մակերեսի վրա: Այս իմաստով կարևոր քայլ էր առարկայի ծավալի պատկերումը քանդակի միջոցով: Քանդակը հնարավորություն է տալիս ոչ միայն տեսնել առարկայի եռաչափությունը, այլև սեփական ձեռքերով արարել այն, որոնք ժամանակի ընթացքում հասունանալու և դառնալու էին գեղարվեստական հնարներ: Քանդակի այս կարևոր առանձնահատկությունը հանգեցնում է այն մտքին, որ ժամանակագրությամբ կերպարվեստի ստեղծման ճանապարհին այն եղել է առաջինը:

Նախնադարի մարդը պատկերում էր այն, ինչ ամենից առաջ ավելի էր տպավորվել, տեսել և հիշել էր, այն, ինչ տարբերվում էր ընդհանուրից: Առաջինը մարդը տեսել է բնական ձևերը: Ժայռոտ վայրերում, քարայրներում գտվել են ինչ-որ մասերով կամ ամբողջությամբ կենդանու կամ մարդու կերպարանք հիշեցնող, անգամ ունեցող բնական «քանդակներ»:

Քանդակագործական արվեստը կապված է փորագրելու միջոցների ստեղծման հետ: Փորագրական նյութերը բազմազան էին, հիմնականում օգտագործվում էր քարը: Փորագրում էին քարի կամ ոսկորի վրա:



Օգտագործում էին եղջերուների կամ մամոնտների ոսկորներ և, իհարկե՝ փայտ:

Եղջյուրի կտրված կտորից ստացվել է գլուխը շրջած բիզոն:

Կայծքարի միջոցով, մեր նախնիները փորագրում էին քարանձավի պատերին, կամ քարի կտորը մանրացնելով՝ ծավալային պատկերներ էին ստանում: Նրանք նույնիսկ կարողանում էին նյութի թերությունները վերածել առավելության:

ԱԼԴԱՄԻՐԱՅԻ ՔԱՐԱՆՁԱՎ

Քարանձավը գտնվում է Իսպանիայի հյուսիսային մասում:

Հայտնաբերվել է XIX դարի վերջին:

Զարմանալի է, բայց քարանձավի պատերին և առաստաղին գտնված պատկերներն այնքան բարձր որակի էին, որ գիտնականներն երկար ժամանակ կասկածում էին դրանց իսկությանը:

Դրանք հայտնաբերող հնեաբան Մարսելինո Սանց դե Սաուտուլին մեղադրում էին կեղծարարության մեջ:

Ժայռապատկերների իսկությունը ապացուցվեց միայն 1902 թ.: Պատկերներն արված էին ածուխով և օխրայով:

Շատերն ուղղակի չէին հավատում նախնադարյան մարդու ստեղծագործական ու մտավոր այդչափ հնարավորություններին:

Քարանձավը բաղկացած է հինգ սրահներից: Առաջին՝ ամենամեծ սրահի երկարությունը 40 մետր է, լայնությունը՝ 9-15 մ, բարձրությունը՝ 30-ից 2 մետր:



ԼԱՍԿՈՅԻ ՔԱՐԱՆՁԱՎ

1940 թ. սեպտեմբերին, բոլորովին պատահաբար, ֆրանսիացի մի քանի աշակերտներ հայտնաբերեցին նախնադարյան արվեստի անհաղաշալի պատկերասրահներից մեկը:

Լասկոյի քարանձավները գտնվում են Ֆրանսիայի հարավ արևմուտքում:

Զարդարված են ազդեցիկ ժայռապատկերներով: Ընդհանուր պատկերների տարիքը հասնում է 17000 տարվա:

Այս փոքրիկ տարածքում հայտնաբերվել են զուբրերի, արջերի, բիզոնների, ոնգեղջյուրների հարյուրավոր պատկերներ:

Աշխարհում հայտնաբերված ամենամեծ պատկերը Լասկոյի քարայրում գտնված ցուլի պատկերն է, որի երկարությունը հասնում է 5.2 մետրի:

Քարանձավը համեմատաբար փոքր է, բոլոր սրահները միասին ձգվում են մոտ 250 մետր, միջին բարձրությունը 30 մետր է:

Լասկոյի քարանձավի պատկերներում մեր նախնիներին ամենից առաջ գրավել է շարժումը: Նրանց դիրքի մեջ նկատելի է որոշակի ձգվածություն:

Քարանձավը՝ ըստ գիտնականների, կարելի է ամենահսկական գեղարվեստական արվեստանոց համարել: Այստեղ հայտնաբերվել են լուսամփոփներ, ներկեր, սննդի մնացորդներ, գործիքներ և աշխատանքային պարագաներ:





Նախնադարյան մարդկանց կյանքի յուրօրինակ հանրագիտարաններ են Հայկական լեռնաշխարհի տարածքում (Գեղամա, Վարդենիսի, Հայկական Տավրոսի լեռնաշղթաներ, Սյունիք, Արագածի փեշեր) հայտնաբերված ժայռապատկերները: Որսորդական, ծիսական տեսարանները, երկնային մարմինների երկրաչափական խորհրդանիշներն ու մարդակերպ աստվածների, ֆանտաստիկ կենդանիների պատկերները վկայում են այդ ժայռապատկերների կրոնական բնույթի մասին:



Տեղանքը շրջափակված է լեռներով և բլուրներով և 9 ամիս շարունակ ծածկված է լինում ձյունով: Ծովի մակերևույթից 2900-3300 մետր բարձրության վրա փռված են ալպիական գորգերը: Ձորակներում, լճակների բոլորը, երևում են հնագույն կացարանների, կիսավեր պատերի հետքեր, արհեստական քարակույտեր և դամբարաններ:

Հեռավոր անցյալում անասնապահ ցեղերի կողմից յուրացված այս վայրերի, ամառային արոտատեղիներ լինելու վկայություններ են հնագույն կացարաններն ու դամբարանները, ինչպես նաև քարաբեկորների վրա փորված պատկերները: Նախնադարյան նկարիչները պղնձագույն և սև ժայռաբեկորները վերածել են բնական հարմար կտավի՝ պատկերներ դրոշմելու համար:
Սյունիքի ժայռարվեստի հնագույն՝ առաջին ստեղծագործություններ են եղջերուների և գիշատիչների մեծադիր պատկերներն, որոնք դրոշմված են ժայռաբեկորների վրա: Կան նաև կենցաղային և այլ տեսարաններով, առավելապես բազմաֆիգուր ժայռապատկերներ:
Այստեղ պատկերված է Հայաստանի ֆաունայի ողջ հարստությունը. այծի, մուֆլոնի, վիթի, եղջերուի, տուրի, ձիու, վարազի, շան, գայլի, շնագայլի, հովազի, առջի, առյուծի պատկերները: Նախնադարյան նկարիչը պատկերել է կենդանու շարժումները, բնավորությունը որսալու և արտահայտելու մեծ կարողություն: Կենդանիները, հատկապես գիշատիչները, գծված են դիպուկ, սակայն առանց մանրամասնությունների: Հաճախ հանդիպում են որսի տեսարաններ:

Գեղամա լեռների պատկերների մեջ բազմաթիվ են վայրի կենդանիների ամենատարբեր տեսակները: Հստակորեն նշմարվում են ինչպես հին ժամանակներից պահպանված, այժմ Հայաստանում գոյություն չունեցող, այնպես էլ մեր օրերին բնորոշ կենդանիների պատկերներ: Դրանք են՝ զուբրը, վայրի ցուլը (կամ կովը), կովկասյան ազնիվ եղջերուն, առյուծը հեպարդը, իշայծամը, կխտարները, ընտելացված ու վայրի ձիերը (շատ ուշ), աղվեսն ու գայլը, շների շատ տարատեսակներ, վարազը, լուսանը, ընձառյուծը, նապաստակն ու մանր կենդանիների վատ որոշվող մի քանի տեսակները, սողունների զանազան տիպերը, վերջապես՝ բադը, սագը, արագիլը, կարապը, կաքավը: Այս կենդանիներից շատերը այժմ էլ ազատ ապրում են Գեղամա լեռներում:

Առասպելաբանական տիեզերքի ջրերը հանդես են գալիս օձերի կամ վիշապների տեսքով՝ մարմնավորելով լույս ու մութ աշխարհները, ինչպես նաև փաստելով՝ տիեզերական աղաղչագործության և կործանման ուժերի ներդաշնակ հավասարակշռությունը:



Մեր նախնիները ծնվել, ձևավորվել և զարգացել են Հայկական լեռնաշխարհում ստեղծելով իրենց ուրույն, բազմաշերտ, բազմաբովանդակ մշակույթը, տիեզերքի կառուցվածքի մասին իրենց առասպելական մոդելը, աշխարհի ստեղծման և կործանման սեփական դիցաբանական սկզբունքը, որն արտահայտվել է զարդարվեստի, քանդակի, ճարտարապետության ապա ամենատարբեր զարգացումներ ունեցել տաճարների, եկեղեցիների, խաչքարերի արվեստում:



Արծաթե մեդալիոն Սիսիանից, Ք.ա. II դար, Արծիվը ճանկերում բռնել է պարտված թշնամուն՝ հովազին:

Մինչև մեր օրեր են հասել ծիսական անոթները, սպիտակ և կարմիր գույներով հարդարված խեցեղենը, բրոնզե դաշույնները, նետ-աղեղները, մեծաքանակ ուլունքները և այլն: Հայ վարպետները դեռ նախնադարում հմտացել էին ոսկե և արծաթե զարդերի պատրաստման մեջ: Մեր նախնիները հարևան պետությունների հետ առևտուր էին անում՝ Եփրատ գետի հոսանքով: Ինչպես վկայում է Հերոդոտոսը, լաստերով բարձած ապրանքը ավանակների հետ իջեցնում էին Բաբելոն, որտեղ լաստերը դարսում էին ավանակների վրա և վերադառնում Հայաստան:

Պորտասարի տարածքում հայտնաբերվել է Սթոունհենջի նման հուշարձան: Այն թվագրվում է մ.թ.ա. X հազարամյակով: Քարերից մի քանիսի վրա պատկերված են տարբեր կենդանիներ:

Հայ միջնադարյան գեղարվեստական մշակույթում պահպանված նյութական հուշարձանների շարքում մեծաքանակ են խեցեգործության իրերն իրենց բազմապիսի նպատակային բնույթով և ձևերով: Այս իրերի վրա մեծ թվով կենդանապատկեր կավանոթներ, թռչնակերպ խորաններ, լուսանցազարդեր կան:
Կան նաև մարդկանց պատկերներով խեցեղեն իրեր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Օգտագործելով ժայռապատկերների հիմնական գծանկարները, փորձի՛ր «Աշխարհի արարման» վերաբերյալ նկարագրդ պատմություն ստեղծել:
2. Փորձի՛ր բրոնտագործական իրերի պարզ ձևավորումներ կատարել:

ԴԻՏԵՆՔ ԵՎ ՔՆՆԱՐԿԵՆՔ

Ներկայացված պատկերագրերից որոնք են վերաբերվում աստղագիտությանը:

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՊԱԳԱ

Այսօրվա արվեստը ստեղծվել է 20-րդ դարի երկրորդ կեսին կամ 21-րդ դարում: Ժամանակակից արվեստագետներն աշխատում են մշակութային բազմազանությամբ և տեխնոլոգիական առումով զարգացող աշխարհում:

Ժամանակակից արվեստը բազմազան է, և ընդգրկում է մեր իրականության ավելի լայն շրջանակներ: Միևնույն ժամանակ, ապագայի արվեստի միտումները սկսում են ձևավորվել այսօր:

Տեխնոլոգիաների այս դարաշրջանը մարդու մոտ ձևավորում է մշակութային նոր ընկալումներ՝ երաժշտությունը, նկարչությունը, գրականությունը և արվեստի մնացած ճյուղերը ներկայացվում են նաև թվային գործիքների միջոցով:

Արվեստի ո՞ր ժանրերը կնախընտրի ապագայի մարդը, մշակույթի ինչպիսի՞ ընկալում կունենան հասարակություններն ապագայում: Արդյո՞ք մարդու համար մշակույթը կշարունակի լինել հոգևոր, անձռնմխելի դաշտ, թե ոչ:

Այնուամենայնիվ, տեխնոլոգիաները արդեն մուտք են գործել արվեստ, արվեստի ժանրերն էլ են փոխվել: Ժանրերն այսօր արդեն հիբրիդացվում են, իրենց մաքուր տեսքով հանդես չեն գալիս: Այսօր մշակույթը ունի տարբեր միջոցներ մարդու պահանջմունքը բավարարելու համար, և արվեստի տարբեր ճյուղերում ձևավորվում են խառը մոտեցումներ, և դրան նպաստում են նաև համացանցի ստեղծած հնարավորությունները:

Ապագայում, թանգարանում մի նկարի առաջ կանգնող, կամ ժամեր շարունակ դահլիճում դասական երաժշտություն լսող մարդիկ, գուցե, շատ չլինեն: Այսօր, երաժշտական սիմֆոնիա ստեղծելու համար նվագախմբի ներկայությունն արդեն պարտադիր չէ, որովհետև բոլոր գործիքները հատուկ ծրագրերով համակարգչի մեջ են, նկար ստեղծելու համար կտավ և յուղաներկ պարտադիր չէ, իսկ հազար էջանոց գիրքը քչերին է հետաքրքրում, երբ նույն գրքի կարճ աուդիոտարբերակը կամ սեղմավետը համացանցից գտնելու համար մի քանի վարկյան է պահանջվում:

Ապագայում, գուցե մեր կյանքն առցանց այնքան տեսանելի դառնա բոլորի համար, որ մեր գաղտնիությունն ավելի ցանկալի լինի, քան ստեղծագործական համբավը: Հազարավոր կամ միլիոնավոր հավանումների և հետևորդների սարդոստայնում մենք կկարոտենք շփումները և անկեղծությունը, որ ստանում ենք այսօր, հաճախելով համերգասրահներ, ցուցասրահներ, թատրոն:

Մյուս կողմից, սակայն, պատմությունը փաստում է, որ գիտատեխնիկական առաջընթացը մշտապես նպաստել է մարդկության զարգացմանը և կենսական ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործմանը՝ ավելի շատ ժամանակ ազատելով ստեղծագործելու համար:

Ապագան կարող է անորոշ լինել, բայց որոշ բաներ անհերքելի են. կլիմայի փոփոխություն, փոփոխվող ժողովրդագրություն, աշխարհաքաղաքականություն: Հուսանք, որ դրական փոփոխություններ ևս կլինեն: Հնարավոր է, որ արվեստագետները

արձագանքեն դրանց, կախված, թե ինչ նպատակների կծառայի արվեստն ապագայում:

2040 թվականին արվեստը կարող է մեր պատկերացրած արվեստի նման չլինել, բայց այն կլինի ամեն ինչի մասին, արտացոլելով ապագայի իրականությունը, նույնքան բազմազան, որքան այն ստեղծողներն են: Կլինեն արվեստագետներ, ովքեր կուսումնասիրեն նոր միջավայրեր և տարածություններ, նույնիսկ տիեզերքում:







ՀԱՐՑԵՐ

ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դիտե՛ք պատկերները, որոշե՛ք, ի՞նչ նյութ է օգտագործված:
2.Վերնագրե՛ք աշխատանքները:
3.Քննարկե՛ք:

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Տարբեր նյութեր կիրառելով ստեղծեք կոլաժներ, ներկայացնելով ապագայի արվեստը ձեր պատկերացմամբ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՆՈՐ ԿԻՐԱՌՈՒՄՆԵՐԸ

Արվեստագետները շատ հաճախ են փոխառում իրենց գաղափարները հին մշակույթներից: Ազդվելով ժողովրդական կամ արդեն դասական դարձած ստեղծագործություններից, նրանք ստեղծում են բոլորովին նոր արվեստ, երբեմն նաև գլուխգործոցներ:

Դասական արվեստ

Սովորաբար ասում են, որ հռոմեական արվեստն առաջացել է հունական և էտրուսկյան արվեստից: Մեծահարուստ հռոմեացիների վիլլաներում հայտնաբերված մեծաքանակ արվեստի նմուշները ցույց են տալիս, թե որքան մեծ է եղել հակումը ամենայն հունականի նկատմամբ: Հունական ամենանշանակալի արվեստի գործերից շատերը պահպանվել են իրենց հռոմեական մեկնաբանության և ընդօրինակման շնորհիվ:

Հին Հունաստանի և Հռոմի արվեստը ոգեշնչում է արվեստագետներին ավելի քան 2500 տարի: Վերածննդի մեծ վարպետներից, մինչև 19-րդ դարի ռոմանտիկ նկարիչները մեծապես ոգեշնչված են եղել հին դասական արվեստի նմուշներով: Արվեստի պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես է յուրաքանչյուր ոճական և գեղագիտական նորամուծություն արմատներով խորանում նախորդ դարերի գեղարվեստական ստեղծագործությունների մեջ: Այսպիսով, հնագույն արվեստի ուսումնասիրությունը հիմնարար նշանակություն ունի ժամանակակից արվեստի գործերը ընկալելու համար:

Եվրոպայում Վերածննդից հետո ևս հունական ու հռոմեական արվեստի բարձր չափանիշները ոգեշնչել են եվրոպական արվեստագետների սերունդներին: Մինչև 19-րդ դար, Հունաստանից և Հռոմից սկիզբ առած դասական ավանդույթները գերիշխում էին արևմտյան աշխարհի արվեստում: Հին Հունաստանի և Հռոմի մշակույթն ու առասպելները արևմտյան ակադեմիական արվեստի ամենատարածված թեմաներն էին: 20-րդ դարի արվեստում այս թեմաները կրկին հանդիպում են, համադրման նոր դեմքով:

Վերածննդի արվեստը հայտնի և սիրելի է արդեն քանի դար: Գրեթե անհնար է, որ ժամանակակից արվեստագետը չուսումնասիրի և չոգևորվի Վերածննդի արվեստի պատկերներով, և չկրի դրա ազդեցությունը:

Ժողովրդական արվեստ

Այսօր մեր համերգասրահներում հնչում են Կոմիտասի, Սայաթ Նովայի հայտնի ստեղծագործությունների նոր մշակումներ: Արվեստագետները շատ հաճախ են փոխառում իրենց գաղափարներն ուրիշ մշակույթներից: Տարբեր ժողովուրդների էպոսներ ու բալլադներ, նոր շունչ են առնում ժամանակակից գրականության, թատրոնի և կինոյի գործերում:

Ժողովրդական նվագարանները հնչում են սիմֆոնիկ գործիքավորմամբ, նոր նշանակություն և ճանաչելիություն հաղորդելով ժողովրդական մշակույթին:

Այսօր շատ ֆիլմերում կարող ենք լսել դուդուկի ծանոթ մոտիվներ: Այն դարձել է հոլիվուդյան սաունդթրեքերի համար երաժշտություն կատարելու ամենատարածված գործիքներից մեկը:

Համաշխարհային հեղինակություն վայելող առաջին ֆիլմը, որում հնչել է դուդուկը, «Քրիստոսի վերջին գայթակղությունն» է: Դրան հաջորդել են այլ ֆիլմեր և հեռուստասերիալներ: Դրանցից ամենահայտնին. «Գլադիատոր», «Արարատ», «Ալեքսանդր», «Քրիստոսի կրքերը», «Մյունխեն», «Սիրիանա», «Դա Վինչիի ծածկագիրը», «Մոխիրը և ձյունը», «Ծովագնացության համար անպետք նավի կմախք», «Քսենա - թագուհու մարտիկներ», «Ռուսական տուն», «Ագռավ», «Օնեգին» ֆիլմերն են:

Ջիվան Գասպարյանի կատարած դուդուկը կարելի է լսել երեք տասնյակից ավելի ֆիլմերում:



ՀԱՐՑԵՐ

ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դիտե՛ք պատկերները, որոշե՛ք, ո՞րն է բնօրինակը:
2.Ե՞րբ եք վերջին անգամ լսել հայկական դուդուկ, որտե՞ղ:
3.Ընտրե՛ք դասական արվեստի որևէ ստեղծագործություն, և ներկայացրե՛ք նորովի:

ՄԻՆԻՄԱԼԻՍՏԱԿԱՆ, ՀԱՍՏՈՑԱՅԻՆ ԵՎ ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԱՐՎԵՍՏ

Մինիմալիզմ, մարանկար, մինիատյուր

▪ Ոչ տպագիր գրքի պատկերազարդում, կերպարվեստի ստեղծագործություն, որն առանձնանում է փոքր չափերով և գեղարվեստական հնարքների նրբությամբ:

Մանրանկարչության հիմնական բնագավառներից մեկը գրքի մանրանկարչությունն է: Մանրանկարչություն ունեցել են գիր և գրականություն ստեղծած ժողովուրդները:

Մանրանկարչության մեկ այլ հատուկ տարատեսակը լաքով, յուղաներկով կամ տեմպերայով ստեղծված նկարներն են՝ լաքե ոչ մեծ առարկաների մակերեսին:

▪ **Մինիատյուր** եզրույթի փոխարեն գրական, երաժշտական, թատերական, կրկեսային, էստրադային ստեղծագործությունների վերաբերյալ, որպես «փոքր ձևերի» երկեր, կիրառվում է «մանրապատում»-ը՝ նշելով կարճ պատմվածք, պիես, վոդևիլ, պարարվեստի, էստրադային, ծաղրածուական փոքր տեսարան, երաժշտական մանրանվագ և այլն: Նուրբ, փոքրաչափ երկերից է կազմվում մանրապատումների թատրոնների խաղացանկը:

▪ **Մինիմալիզմը** 20-րդ դարի գեղարվեստական հոսանք է, որը ձգտում է ցույց տալ միայն էականը, հեռացնելով այն ամենը, ինչ ավելորդ է կամ ոչ անհրաժեշտ: Բխում է անգլերեն «մինիմալիզմ» բառից, փորձելով նվազագույն ռեսուրսներով ստանալ ամենամեծ արտահայտչականությունը:

Մինիմալիզմ անվանում են դիզայնի ոճը, որը նվազեցնում է շեղող գործոնների քանակը՝ թույլ տալով հիանալ և կենտրոնանալ հիմնական ասելիքի վրա:

Մեծ վարպետությամբ կատարված կետային դաջվածքները, նույնպես համարվում են մինիմալիստական աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ մանրանկար կամ մինիատյուր եզրույթը կիրառվում է ցանկացած տեսակի արվեստի գործի համար, որն ստեղծված է սովորականից ավելի փոքր չափերով:









Հաստոցային արվեստ

Եզրույթը առաջացել է «հաստոց» բառից, որի վրա ստեղծվում են հաստոցային արվեստի ստեղծագործությունները: Գեղանկարչության մեջ, դա նկարակալն է, քանդակում և խեցեգործության մեջ՝ դազգահը, գրաֆիկայում՝ փայտի, քարի կամ մետաղի վրա տպագրության հաստոցները:

Հաստոցային գեղանկարչական, քանդակագործական և գրաֆիկական ստեղծագործությունները գեղարվեստական ինքնուրույն արժեք են ներկայացնում: Մեր շրջապատում, հատկապես փակ տարածքներում հանդիպող բոլոր ստեղծագործական աշխատանքները հաստոցային արվեստի օրինակներ են: Դրանք զարդարում են միջավայրը, պատմում կյանքի էության մասին, բարոյագիտական վսեմ իդեալների, գեղեցիկի մասին, բայց դրանցից յուրաքանչյուրը այն արտահայտում է յուրովի: Պատմության ընթացքում ստեղծվել են հաստոցային արվեստի տեսակներ, որոնք գեղարվեստական ստեղծագործության հիմնական սկզբունքներն արտացոլել են նոր նյութերի ու միջոցների լույսի ներքո:





Մոնումենտալ արվեստ

Կոթողային արվեստ, տարածական արվեստների այն բնագավառը, որի ստեղծագործությունները կերտվում են կոնկրետ ճարտարապետական միջավայրի համար: Դրանք գաղափարով, տեսողական, կառուցվածքային ու գունային համադրումներով համապատասխանում են միմյանց:

Մոնումենտալ արվեստի գործեր են հուշարձաններն ու կոթողները, կառույցների քանդակագործական, գեղանկարչական, խճանկարչական հարդարանքը, վիտրաժները և այլն: Շինության ճակատի և ինտերիերի կոմպոզիցիաները, հրապարակի հուշարձանը սովորաբար մարմնավորում են տվյալ ժամանակի սոցիալական և փիլիսոփայական առավել ընդհանուր գաղափարներ, նվիրվում ականավոր գործչի կամ նշանավոր իրադարձության հիշատակին:

Մոնումենտալ արվեստի գործերը կարող են ճարտարապետության մեջ համահնչունորեն ուղղակի զարդարել պատերի, ծածկերի, ճակատների մակերեսները, և բարձր գաղափարներ չկրել:

Մոնումենտալ արվեստը բարձր զարգացման է հասել Հայաստանում: Դրանց թվում յուրահատուկ տեղ են գրավում Մ. Սարյանի ստեղծած Սունդուկյանի անվան թատրոնի վարագույրը, նրա էսքիզներով վիտրաժները («Հայհամերգ»-ի փոքր դահլիճում): Հ. Գյուրջյանի, Դ. Մերկուրովի, Գ. Ցակուլովի, Ա. Սարգսյանի, Ս. Ստեփանյանի և ուրիշների ստեղծագործություններում:

Ե. Քոչարի «Սասունցի Դավիթ»-ը առաջնակարգ տեղ է գրավում այդ ասպարեզում:



ՀԱՐՑԵՐ

ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դիտե՛ք պատկերները,
ա.Ի՞նչ փոփոխություն կանեք ձեր սենյակում, որ ստանաք մինիմալիստական ոճ:
բ. Ընտրե՛ք հաստոցային ստեղծագործություն, որը կնախնտրեիք ունենալ ձեր տանը:
գ.Ձեր բնակավայրի համար նախագծեք մոնումենտալ հուշարձան:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Աշխարհային արվեստի պատմության մեջ շրջադարձային եղավ Քրիստոնեության քը: Դեռևս մինչև Քրիստոնեությունը որպես պետական կրոն ճանաչելը եվրոպական և ասիական շատ երկրներում արդեն հանդիպում են քրիստոնեական թեմաներով ստեղծագործություններ:





Հռոմեական կայսրության տարածքում առաջին քրիստոնյաները պետական իշխանությունների հետապնդումներից թաքնվելով, պատսպարվում էին գետնափոր դամբարաններում և խորշերում՝ այնտեղ աղոթելու և նոր կրոնը տարածելու նպատակով: Այդ քարանձավներում պահպանվել են բազմաթիվ խորհրդանշական պատկերներ:

Հետագա դարերում Քրիստոնեական եկեղեցին ոչ միայն հաստատվեց, այլև ստեղծեց քրիստոնեական թեմաներով մեծաթիվ ստեղծագործություններ:

Հռոմեական կայրությունում քրիստոնեական արվեստը ծաղկում ապրեց Բյուզան դիայում, հատկապես Կոստանդնուպոլսում՝ կայսրության տարածքում քրիստոնեությունը պետականորեն ճանաչելուց անմիջապես հետո:

Հռոմի կայսր Կոստանտինոս Մեծը թույլատրել էր քրիստոնեական դավանանքը, իսկ հետագայում բացահայտորեն հովանավորում էր քրիստոնեությանը:

330 թ. պետության մայրաքաղաքը տեղափոխելով Կոստանդնուպոլիս, բազմաթիվ բարեփոխումներ կատարեց:

Կոստանդիանոս կայսրը մի շարք քրիստոնեական եկեղեցիների, այդ թվում նաև Հայ առաքելական եկեղեցու կողմից դասվել է սրբերի շարքը:

Կոնստանտինոս Մեծի և նրա հաջորդների ժամանակ քրիստոնեությունը դարձավ կայսրության տիրապետող կրոնը:
Բյուզանդական արվեստը ամբողջությամբ կապված էր հոգևոր թեմաների հետ և գտնվում էր եկեղեցու խիստ հսկողության տակ:



Հուստինիանոս Ա կայսրի կառավարման տարիների հետ համընկավ Բյուզանդական մշակույթի «Ոսկե դարը»: Նոր հմայքով և շքեղությամբ փայլեցին ճարտարեպությունը, դեկորատիվ արվեստները, ոսկերչությունը: Բյուզանական կայսրության տիրակալները մրցում էին Հռոմի հզորության և հարստության հետ: Այդ շրջանում կառուցված արդեն քրիստոնեական տաճարները հետագա դարերի պատմության մեջ մնացին անմրցելի՝ իրենց վեհությամբ, նորարությամբ, շքեղությամբ՝ քրիստոնեական դավանանքի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքով: Այս շրջանի արվեստն իր արտացոլումը գտավ հարևան երկրների քրիստոնեական մշակույթի շատ ոլորտներում:



Բյուզանդական «Ոսկե դարի» խորհրդանիշ՝ Սուրբ Սոֆիայի կամ Այա Սոֆիայի տաճարն ի սկզբանե եղել է Բյուզանդական կայսրության պատրիարքի նստավայրը: Տաճարի պատմությունը սկսվում է կայսր Կոստանդիանոս Ա Մեծի օրոք: Հենց նա 324 թվականին հիմնեց Կոստանդնուպոլիսը որպես կայսրության մայրաքաղաք: Իսկ 326-ին Կոստանդիանոսը մայրաքաղաքում կառուցեց առաջին եկեղեցին սուրբ Սոֆիայի անունով:
Սուրբ Սոֆիան առաջին անգամ վառվեց ապստամբության ժամանակ՝ 404 թվականին, վերականգնված տաճարը նորից փլուզվեց 531 թվականին: Հուստինիոնոս 1-ին կայսրը կառուցեց նոր տաճար: Այդ ժամանակ Կոստանդնուպոլսում կար մոտ 30 եկեղեցի, որոնք աչքի էին ընկնում արծաթով, ոսկով ու բազմագույն մարմարով հարուսը ձևավորումներով: Բայց Հուստինիանոսն իր առաջ նպատակ էր դրել կառուցել այնպիսի տաճար, որն իր շքեղությամբ ու մեծությամբ կգերազանցի աշխարհում նմանատիպ ցանկացած այլ կառույցի: Տաճարի կառուցման վրա են աշխատել շուրջ 100 ճարտարապետներ:

Հետագայում, թուրքերը, գրավելով Բյուզանդիայի մայրաքաղաքը, այս տաճարը դարձրեցին մզկիթ: Ներկայումս Սուրբ Սոֆիայի տաճարը թանգարան է:



Այա Սոֆիայի պատերն ու հատակն ամբողջությամբ պատված են մարմարով: Սյուների գագաթներին մանր փորագրություններ կան: Ամենուրեք աչքի են ընկնում ոսկով արված խաչանկարները: Իրականում, գտնվելով տաճարի ներսում, հնարավոր չէ ճշգրիտ պատկերացում կազմել տարածության ճարտարապետության կառուցվածքի մասին, քանի որ պատուհաններից ներս են թափանցում լույսի բազմաթիվ շերտեր, որոնք, ընկնելով պատերի վրա, ներկայանում են որպես սյուների շարաններ:

Հուստինիանոսն այնքան էր կլանված տաճարի շքեղության գաղափարով, որ չէր ափսոսում ոչինչ: Հարդարանքի համար նա օգտագործում էր թանկարժեք քարեր, ոսկի, արծաթ և փղոսկր:

Ռավեննայի Սան Վիտալե եկեղեցին բյուզանդական արվեստի խորհրդանիշներից է: Այն առանձնանում է իր խճանկարների կատարելությամբ:
Արտաքինից եկեղեցին մեծ չի թվում, սակայն ներս մտնելով հասկանում ես, որ դա բոլորովին էլ այդպես չէ:

Սան Վիտալե բազիլիկան զարմացնում է սյուների քանակով, և հարդարանքով: Դրանց շարքերը ներդաշնակ են և տպավորություն է ստեղծվում, թե պար են բռնել:
Սյուների վերնախարիսխները զարդարված են քանդակված դրախտային կերպարներով: Դրանք այնքան բարդ ու մանր նախշերով են արված, որ մարմարյա ժանյակներ են հիշեցնում:
Այստեղ արտացոլված է ողջ կենդանական աշխարհը. ամենուրեք կան կենդանիների ու թռչունների ոսկեզօծ պատկերներ:

Իրար հանդիպակած կողմերի վրա պատկերված են եկեղեցուն նվիրատվություն մատուցող երկու թափորներ:
Դրանցից մեկն առաջնորդում է Հուստինիանոս կայսրը, մյուսը՝ Թեոդորա թագուհին:

Եթե փորձենք բնորոշել բյուզանդական արվեստի առանձնահատկությունները, ապա առաջին հերթին պետք է հիշենք այդ շրջանում տաճարները և թագավորի նստավայրը անթիվ խճանկարներով զարդարելու արվեստը և մեծ վարպետությունը:

Բյուզանդական խճանկարներին բնորոշ է յուրահատուկ ոսկեգույնի կիրառումը: Ոսկեգույն խճաքարերի հատուկ դասավորությունը շարժման տպավորություն էր ստեղծում:
Բյուզանդացի վարպետները հմտորեն եզրագծում էին պատկերները՝ փայլատակող ֆոնից դրանք անջատելու և ավելի արտահայտիչ դարձնելու նպատակով:

Բյուզանդացի ոսկերիչների համբավը տարածված էր հարևան երկրներում:

Ոսկերչական իրերի գեղեցկության և անկրկնելիության գաղտնիքը բազմերանգ քարերի և ոսկու առատ օգտագործումն էր:

Բյուզանդացիները մեծ խորհուրդ էին տեսնում ոսկու և ոսկեգույնի մեջ: Նրանց կարծիքով՝ ամբողջ երկնակամարը ոսկով էր պատված, քանի որ Աստծո երկնային գահն այնտեղ էր:

Համադրելով թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, մարգարիտը, ոսկին ու արծաթը՝ բյուզանդացի վարպետները անկրկնելի գործեր էին ստեղծում:



Զարդակիրառական արվեստը Բյուզանդիայում ձևավորվել է հունահռոմեական անտիկ արվեստի հիմքի վրա: Միևնույն ժամանակ իր ոգով և բնույթով այն խիստ տարբեր է: Ոսկերչությունը՝ մյուս արվեստների հետ, իր բուռն ծաղկումն ապրեց Հուստինիանոս կայսեր կառավարման օրոք:

Ոսկերչական իրերի հիմնական պատվիրատուները եկեցին և կայսերական պալատն էին: Բյուզանդացիները սիրում էին շքեղություն: Այն համարում էին իրենց բարձր կարգավիճակի չափանիշը: Ձգտելով հասնել կատարելության նրանց իրենց կենցաղն ու հոգևոր կյանքը շռայլորեն զարդարում էին թանկարժեք իրերով:
Ոսկին, արծաթը, մարգարիտը և թանկարժեք քարերը օգտագործվում էին զարդերի, սրբապատկերների, խաչերի, եկեղեցական պարագաների, մասունքի պահարանների պատրաստման ժամանակ:





Ոսկով ձևավորված զարդանախշերն երիզում էին սրբապատկերերն ու սպասքը: Զարդանախշերը բազմազան էին և շատ տարածված: Այդ շրջանում ձևավորվեց բուսական և կենդանական զարդանկարչություն յուրօրինակ մշակույթ: Ոսկով, արծաթով և թանկարժեք քարերով ձևավորվում էին նաև Աստվածաշունչ մատյաններն ու Ավետարանները:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կատարի՛ր դեկորատիվ աշխատանք՝ օգտագործելո բյուզանդական զարդանախշեր:
2. Փորձի՛ր ստեղծել ժամանակակից նորաձև զարդեր, պահպանելո բյուզանդական ոճը:
3. Ձևավորի՛ր քո ընթերցած գրքերի որևէ մեկի կազմ
4. Կատարի՛ր խճանկար աստվածաշնչյան թեմաներ
5. Կատարի՛ր խճանկարի էսքիզ, ձեր դպրոցի միջանցքի համա

ԴԻՏԵՆՔ ԵՎ ՔՆՆԱՐԿԵՆՔ

1. Քո կարծիքով քրիստոնեության մուտքը ի՞նչ ազդեցություն ունեցավ համաշխարհայ արվեստի զարգացման վրա:
2. Ուշադիր դիտի՛ր Հուստինիանոս Ա կայսրի և Թեոդորա թագուհու դիմանկարներ փորձի՛ր վերլուծել նրանց բնավորությունները:

Միջնադարյան արվեստին փոխարինելու եկավ Վերածննդի դարաշրջանը, որը մեծ ազդեցություն ունեցավ համաշխարհային մշակույթի հետագա զարգացման վրա: Վերածնունդը սկսվեց Իտալիայում՝ XIV դարում: Այն իր բարձրագույն կետին հասավ XVI դարում:

Վերածննդի տարբեր դարեր անվանվում են ըստ իտալական թվերի:

- դուչենտո 1200- ականներ (ducento (երկուհարյուր) Պրոտոռենեսանսի սկիզբը:
- տրիչենտո 1300- ականներ (trecento (երեքհարյուր) բուն Պրոտոռենեսանսը
- կվատրոչենտո 1400- ականներ (quattrocento (չորսհարյուր) Վաղ Վերածնունդ, Բարձր Վերածնունդ
- չինկվեչենտո 1500- ականներ (cinquecento (հինգհարյուր) Բարձր Վերածնունդի վերջը, Ուշ Վերածնունդ

«Վերածնունդ» նշանակում է նաև մշակույթի ծաղկում



Մարդը հռչակվեց տիեզերքի կենտրոն, բնության առավել կատարյալ ստեղծագործություն:

Վերածնունդի մեծերը անտիկ կոթողների օրինակով ստեղծեցին գլուխգործոցներ, որոնք մինչև օրս էլ հիացմունք ու զարմանք են պատճառում դիտողին:

Տիրամայր, Աստվածամայր, Աստվածածին, Տիրածին, Սուրբ Կույս Մարիամ: Վերածնունդի շրջանի նկարիչները պատկերում էին Մարիամ Աստվածածնին գեղեցիկի ամենաբարձր չափանիշների սահմաններում: Արժանապատիվ, ներքին անկաշկանդությամբ, վեհ կեցվածքով և անսահման գեղեցությամբ «Տիրամայրը մանկան հետ» պատկերները զարդարում էին եկեղեցիներն ու տաճարները: